ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

գիտակցելով արտադրության էներգիայի ծախսի նվազեցման առաջընթաց տեմպերի անհրաժեշտությունը եւ տնտեսության անցումը դեպի էներգախնայող զարգացման,

դիտարկելով էներգախնայողությունը որպես բնապահպանական խնդիրների լուծման հիմնական գործոններից մեկը,

հաշվի առնելով էներգաարդյունավետության եւ էներգախնայողության ապահովման բնագավառում համագործակցության զարգացման, ինչպես նաեւ ԱՊՀ մասնակից պետությունների տնտեսությունների էներգիայի ծախսի մակարդակի նվազեցման մեջ ընդհանուր հետաքրքրվածությունը եւ դրա հիման վրա էներգետիկ անվտանգության ապահովումը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագրի նպատակն է էներգախնայողության քաղաքականության իրականացումը տնտեսական եւ գիտատեխնիկական համագործակցության, մարկետինգի, համատեղ ծրագրերի մշակման եւ իրականացման, էներգախնայողության եւէներգաարդյունավետության ապահովման բնագավառում առաջավոր տեխնոլոգիաների օգտագործման, տեղական վառելիքի տեսակների ներդրման, օրենսդրության համապատասխանեցման եւ ներդաշնակեցման, տեղեկատվության փոխանակման, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կայուն կրճատման, մասնագետների պատրաստման եւ համատեղ ծրագրերի ֆինանսավորման մեխանիզմների մշակման բնագավառներում համաձայնեցված գործողությունների իրականացման միջոցով:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերը համագործակցում են էներգաարդյունավետության եւ էներգախնայողության ապահովման միջպետական ծրագրերի մշակման բնագավառում, որոնք նախատեսում են արտադրության կառուցվածքի եւ վառելիքաէներգետիկ ռեսուրսների օգտագործման փոփոխություն՝ հաշվի առնելով տնտեսության գիտատար ճյուղերի զարգացման արդյունքները:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերը փոխշահավետ հիմունքներով զարգացնում են տնտեսական եւ գիտատեխնիկական համագործակցությունը էներգաարդյունավետության եւ էներգախնայողության բնագավառում՝ ստեղծելով պայմաններ, որոնք թույլ կտան խնայողաբար եւ արդյունավետորեն օգտագործել վառելիքաէներգետիկ պաշարները՝ վերականգնվող էներգիայի աղբյուրների եւ վառելիքի այլընտրանքային տեսակների օգտագործման ծավալների մշտական ընդլայնմամբ:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը, ազգային օրենսդրությունների համաձայն, ապահովում են բարենպաստ պայմաններ գիտաարտադրական միավորումների, արտասահմանյան ներդրումներով առեւտրային կազմակերպությունների, ֆինանսաարդյունաբերական խմբերի ստեղծման համար, որոնք կիրականացնեն հետազոտություններ, տեխնոլոգիաների, հսկման

սարքավորումների եւ սարքերի մշակում ու ներդնում՝ էներգաարդյունավետության եւ էներգախնայողության ապահովման ծրագրի իրականացման նպատակով:

ՀՈԴՎԱԾ 5

Էներգախնայողության քաղաքականության իրականացման նպատակով Կողմերը կօգտագործեն տարբեր կազմակերպական ձեւեր, այդ թվում նաեւ՝ Եվրամիության, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի միջազգային նախագծերի եւ ծրագրերի, մասնավորապես՝ "Էներգաարդյունավետություն - XXI" ծրագրի շրջանակներում իրականացվածների փորձը:

ՀՈԴՎԱԾ 6

Կողմերը միջոցներ են ձեռնարկում էներգաարդյունավետության եւ էներգախնայողության ապահովման բնագավառում ազգային օրենսդրությունների համապատասխանեցման եւ ներդաշնակեցման ուղղությամբ, այդ թվում նաեւ՝ ըստ հավաստագրման կանոնների ու ընթացակարգերի եւ չափագիտական հսկման ու վերահսկման պահանջների:

ՀՈԴՎԱԾ 7

Կողմերը, համաձայն պետական եւ առեւտրային գաղտնիքի պահպանության վերաբերյալ ազգային օրենսդրության պահանջների, ապահովում են էներգախնայողության քաղաքականության իրականացման մասով արտադրության եւ վառելիքաէներգետիկ պաշարների օգտագործման զարգացման ներկա իրավիճակի եւ հեռանկարների վերաբերյալ տվյալների թափանցելիություն եւ մատչելիություն:

Կողմերը, օգտագործելով ազգային տեղեկատվական ռեսուրսները, ստեղծում են միացյալ տվյալների շտեմարան էներգաարդյունավետության եւ էներգախնայողության ապահովման բնագավառում:

ՀՈԴՎԱԾ 8

Կողմերը փոխադարձ հետաքրքրության դեպքում աջակցում են վառելիքաէներգետիկ պաշարների հաշվեկշիռների եւ նրանց արդյունավետ օգտագործման առաջարկությունների մշակման գործում:

ՀՈԴՎԱԾ 9

Կողմերը անցկացնում են աշխատանքային հանդիպումներ, սեմինարներ, ցուցահանդեսներ, կոնֆերանսներ, իրականացնում են տեղեկատվության, առաջավոր տեխնոլոգիաների եւ տեխնիկական փաստաթղթերի փոխանակում, ինչպես նաեւ աջակցում են էներգաարդյունավետության եւ էներգախնայողության ապահովման բնագավառում համատեղ ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ սարքավորումների, սարքերի եւ նյութերի փոխշահավետ պայմաններով առաքման հարցում:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագրի իրագործման աշխատանքների համակարգումը իրականացնում են

Կողմերի իրավասու մարմինները, ԱՊՀ Գործադիր կոմիտեն եւ ԱՊՀ Էլեկտրաէներգետիկ խորհուրդը:
Սույն Համաձայնագիրն իրենց համար ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Կողմերը տեղեկացնում են ԱՊՀ Գործադիր կոմիտեին իրենց իրավասու մարմինների մասին:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Համաձայնագրի դրույթները չեն առնչվում այլ միջազգային պայմանագրերով Կողմերի ստանձնած իրավունքներին եւ պարտավորություններին:

ՀՈԴՎԱԾ 12

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Համաձայնագրի ուժի մեջ մտնելու մասին Կողմերի՝ անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի ավարտման վերաբերյալ երրորդ գրավոր ծանուցումն ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:
Այդպիսի ընթացակարգն ուշացումով անցկացրած Կողմերի համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ավանդապահին համապատասխան գրավոր ծանուցումն ի պահ հանձնելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 13

Սույն Համաձայնագրում Կողմերի ընդհանուր համաձայնությամբ կարող են արվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կձեւակերպվեն առանձին արձանագրություններով, կհանդիսանան սույն Համաձայնագրի անբաժանելի մասը եւ ուժի մեջ կմտնեն համաձայն սույն Համաձայնագրի 12-րդ հոդվածի:

ՀՈԴՎԱԾ 14

Սույն Համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը կարգավորվում են շահագրգիռ Կողմերի միջեւ՝ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 15

Սույն Համաձայնագիրը գործում է ուժի մեջ մտնելու պահից 5 տարվա ընթացքում: Այդ ժամկետը լրանալուց հետո սույն Համաձայնագիրն ինքնաբերաբար կերկարաձգվի հնգամյա ժամանակահատվածներով, եթե Կողմերը չեն ընդունի այլ որոշում:

ՀՈԴՎԱԾ 16

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ նախապես գրավոր իր մտադրության մասին ավանդապահին տեղեկացնելով ոչ ուշ, քան դուրս գալու ժամկետից մեկ տարի առաջ եւ կարգավորելով ֆինանսական եւ այլ պարտավորությունները, որոնք գոյացել են սույն Համաձայնագրի գործողության ընթացքում:

ՀՈԴՎԱԾ 17

Սույն Համաձայնագիրը բաց է նրան միանալու համար Անկախ պետությունների համագործակցության մասնակից այլ պետությունների, ինչպես նաեւ երրորդ պետությունների համար, որոնք կիսում են նրա նպատակները եւ սկզբունքները, ավանդապահին այդպիսի միանալու վերաբերյալ փաստաթղթերի փոխանցման միջոցով:
Միացող երրորդ պետության համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում

միանալու մասին փաստաթուղթը ավանդապահին ի պահ հանձնելուց երեք ամիս հետո, եթե
այդ ընթացքում ոչ մի Կողմ չի հայտնում իր առարկության մասին:

Կատարված է Քիշնեւ քաղաքում 2002 թվականի հոկտեմբերի 7-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է ԱՊՀ Գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի նրա վավերացված պատճենը:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2003 թվականի ապրիլի 1-ից: